600.0139.27.05 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 մայիսի 2015 թվականի №139Ա
ք.Երևան

«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ №0318 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2015 թվականի մայիսի 7-ին հայտ է ներկայացրել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով Հանձնաժողովի 2009 թվականի մայիսի 27-ի №240Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված Իրանի Իսլամական Հանրապետությունից բնական գազի ներկրման №0318 լիցենզիայի (այսուհետ՝ Լիցենզիա) գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2016 թվականի մայիսի 27-ը,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 2-ի №339Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի (հզորության) և բնական գազի ներկրման ու արտահանման գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 30-րդ կետի համաձայն՝ լիցենզիայում ամրագրված ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության դեպքում լիցենզավորված անձն իրավունք ունի լիցենզիայի գործողության ժամկետի ավարտից առնվազն 23 աշխատանքային օր առաջ հայտով դիմել Հանձնաժողով, մինչդեռ Ընկերությունը հայտը ներկայացրել է 14 աշխատանքային օր առաջ,

գ) Հանձնաժողովը 2015 թվականի մայիսի 18-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 30-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) Ընկերությունը հարուցված վարույթի շրջանակում ուսումնասիրվող հարցի առնչությամբ որևէ փաստարկ կամ հիմնավորում չի ներկայացրել,

ե) Իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կարգի 30-րդ կետի պահանջը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ, 32-րդ հոդվածները և Կարգը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկարաձգել Ընկերությանը տրամադրված Լիցենզիայի գործողության ժամկետը մինչև 2016 թվականի մայիսի 27-ը:
2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել մեկ միլիոն դրամ գումարի նոր երաշխիք՝ մինչև 2016 թվականի հունիսի 27-ը գործողության ժամկետով:
3. Կարգի 30-րդ կետի պահանջի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
4. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի մայիսի 27-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ **Շ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

ք. Երևան
27 մայիսի 2015թ
ժամը 16^{00}